Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 26-ի N 1402 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման ու հատկացման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ իր կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) և մարզպետի կողմից ստեղծված աջակցող աշխատանքային խմբի միջոցով։

2. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, համապատասխան մարզպետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչներ, Գյումրու, Ստեփանավանի և Սպիտակի քաղաքապետները (համաձայնությամբ) կամ նրանց կողմից լիազորված անձինք։

3. Մարզպետի կողմից ստեղծված աջակցող աշխատանքային խմբի կազմում պարտադիր ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչը։

4. Հանձնաժողովի աշխատանքների թափանցիկությունն ապահովելու նպատակով հաձնաժողովի աշխատանքներին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները։

5. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով։

6. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների ցուցակում (այսուհետ՝ հերթացուցակ) ընդգրկված անձանց հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության մասին որոշումը և հերթացուցակում ընդգրկված անձանց հետ հանդիպումները.

2) բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց մշտական բնակության և նրանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տան) առկայության մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ տեղեկատվությունը ճշտելու նպատակով հարցումների իրականացումը.

3) հատկացվող բնակարանի (բնակելի տան) չափի (սենյակների թվով) որոշումը.

4) բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հրամանի նախագծի նախապատրաստումը.

5) հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին համապատասխան մարզպետներին և քաղաքացիներին իրազեկելը.

6) վիճակահանությամբ բնակարանների բաշխման գործընթացի կազմակերպումը.

7) այլ անհրաժեշտ գործառույթների իրականացումը։

7. Աջակցող աշխատանքային խմբի գործառույթներն են՝

1) բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման գործընթացն սկսելու մասին բնակարան (բնակելի տուն) ստանալու հավակնող անձանց իրազեկելը.

2) հերթացուցակում ընդգրկված անձանց հանձնաժողովի անդամների հետ հանդիպումների կազմակերպումը.

3) համապատասխան համայնքների կողմից ներկայացված՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հերթացուցակում ընդգրկված անձանց հաշվառման գործերի ուսումնասիրությունը և նրանց ամբողջական փաստաթղթային փաթեթները հանձնաժողովին ներկայացնելը.

4) այլ անհրաժեշտ գործառույթների իրականացումը։

8. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի, այդ թվում՝ արտագնա նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության։

9. Արտագնա նիստերը հրավիրվում են համապատասխան մարզերում։ Դրանց կարող են մասնակցել համայնքների ղեկավարները (համաձայնությամբ) կամ նրանց կողմից լիազորված անձինք։

10. Հանձնաժողովի նիստերի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ։

11. Հանձնաժողովի կողմից հերթացուցակում ընդգրկված անձանց՝ փաստաթղթային փաթեթների քննարկման արդյունքներով բնակարանային շինարարության ծրագրում չընդգրկելու վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել Հայաստանի Հանրապետության

կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 12-րդ կետով և 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» N 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված հիմքերով։

12. Հանձնաժողովի նիստերում հարցերի քննարկման արդյունքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն ստանալու պահանջի առաջացման դեպքում հարցերի քննարկումը հետաձգվում է մինչև ամբողջական փաստաթղթային փաթեթները ներկայացնելը։

13. Հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Հայաստանի Հանրապետության այլ նախարարությունների ու կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների համապատասխան ներկայացուցիչները՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ։ Ընդ որում, բնակարանային ապահովման ծրագրում չընդգրկվելու վերաբերյալ հարցերի առաջացման դեպքում քաղաքացիները հրավիրվում են այն նիստին, որտեղ քննարկվում է նրանց՝ ծրագրում չընդգրկելու վերաբերյալ հարցերը։ Ընդունված որոշման մասին 10-օրյա ժամկետում քաղաքացիներին հայտնում են գրավոր։

14. Հանձնաժողովի անդամը, որը համաձայն չէ նիստում ընդունված որոշմանը, ստորագրում է արձանագրությունը՝ նշելով իր հատուկ կարծիքը։ Կարծիքը ծավալուն լինելու դեպքում այն ներկայացվում է առանձին, որի մասին նշվում է արձանագրության մեջ։

15. Հանձնաժողովի գործունեության տեխնիկական և կազմակերպչական աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ